ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՆԱԽԱԳԻԾ

Կ-1045-08.08.2016-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 24-ի քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով.

«4. Ուղղիչ հիմնարկում պահվող օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող դատապարտյալն իրավունք ունի պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմին «Փախստականների եւ ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում ապաստանի խնդրանք, որը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմի կողմից ենթակա է փոխանցման միգրացիայի հարցերով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնին:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի ՆԻՍՏՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

№	Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության/առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1.	ՀՀ կառավարութ-յուն	1. Նախագծի 1-ին հոդվածում ճիշտ նշել ՀՀ քրեակատարողա-կան օրենսգրքի լրիվ անվանումը՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: 2. Նույն հոդվածում նշված «4-րդ մասով՝ հետեւյալ բովանդակութ-յամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «նոր՝ 4-րդ մասով» բառերով՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: 3. Նախագծի 1-ին հոդվածով լրացվող՝ ՀՀ քրեակատարողա-կան օրենսգրքի 12-րդ հոդվածի 4-րդ մասում Հայաստանի Հանրապետության	Ընդունվել է: Ընդունվել է: Ընդունվել է:	Կատարվել է համապատասխան փոփոխություն: Կատարվել է համապատասխան փոփոխություն: Նշյալ կետը հրս-տակեցվել է, մաս-նավորապես «օրենսդրությամբ» բառը փոխարինվել է «կառավարութ-յան» բառով:

		օրենսդրությամբ սահմանված կարգին կատարված հղումը հստակեցման կարիք ունի՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները:		
2.	ԱԺ պատգամավոր Ձհանգիրյան Գագիկ	Առաջարկվում է նմանատիպ փոփոխություն կատարել <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքում՝ ապաստան հայցելու հնարավորություն վերապահելով ձերբակալված և կալանավորված օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի համար:	Ընդունվել է	Նախագծին կից ներկայացվել է համապատասխան օրենքի նախագիծ փաթեթով քննար-կելու նպատակով: